

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի անցկացման նպատակով հայեցակարգային ծրագրի մշակման աշխատանքների կազմակերպման և իրականացման համար անհատ-խորհրդատուի մրցույթ

02 մայիսի 2018թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի անցկացման նպատակով հայեցակարգային ծրագրի մշակման աշխատանքների կազմակերպման և իրականացման համար անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթ:

Անհատ-խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

- ուսումնասիրել «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի կազմակերպման ու իրականացման գործընթացների հայեցակարգային ծրագիր կազմելու տեղական և միջազգային փորձը,
- ուսումնասիրել ՇՊՀ-ի ռազմավարական ծրագիրը, համապատասխան չափորոշչային փաստաթղթերը, ինչպես նաև առկա և ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված նյութատեխնիկական բազան,
- ուսումնասիրել ՇՊՀ-ում ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված և իրականացված հեռաուսուցման դասընթացի կազմակերպման ու իրականացման գործընթացների հայեցակարգային ծրագիրը և ուսումնական նյութերը,
- մշակել «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի հայեցակարգային ծրագրի նախնական տարբերակը՝ ելնելով վերը նշված ուսումնասիրման արդյունքներից,
- կատարել համապատասխան լրամշակում «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի ռազմավարական/հայեցակարգային ծրագրում՝ հիմնվելով դասընթացի կազմակերպման և իրականացման աշխատանքների որակի ապահովման մասնագետի դիտարկումների ու առաջարկությունների և ՇՊՀ-ի ղեկավար կազմի հետ քննարկման արդյունքների վրա:

Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.

№	Անվանումը	Պահանջը	Միավորը
1.	Որակավորում	✓ Մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ:	20
2.	Ընդհանուր աշխատանքային փորձ	✓ դասավանդման փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձ ունենալը կհամարվի առավելություն/, ✓ անհատական և թիմային աշխատանքի փորձ:	40
3.	Հատուկ	✓ որևէ դասընթացի մշակման փորձ,	40

	աշխատանքային փորձ	✓ որևէ դասընթացի կազմակերպման ու իրականացման հայեցակարգի մշակման փորձը ցանկալի է, ✓ տեխնիկական ռուսերենի և անգլերենի իմացությունը ցանկալի է, ✓ ներառական կրթության կազմակերպման/այդ ուղղությամբ դասավանդման/ծրագրի մշակման փորձը կդիտվի իբրև առավելություն:	
	Ընդամենը`		100

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 2,5 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), shirakhovhannisyan@mail.ru, հեռախոս՝ 0312 2 84 69:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018 թվականի մայիսի 16-ը, ժամը 17:00 ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ _____

Հեռ. _____

Էլ. Փոստ _____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում

անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ _____ / _____ /

(ստորագրություն)

« ____ » _____ 2018 թ.